

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 6)**  
**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին**  
**<30> Սեպտեմբեր 2013թ.**

**<<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ, ք.Երևան, Քաջազունու 18**

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)


(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթ.	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը	Հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ժամանակաշրջանը	Նախորդ տարվա սկզբից մինչև նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		199,722	149,108	574,170	389,844
Տրանզակցված և նմանատիպ ծախսեր		(80,639)	(59,465)	(233,214)	(158,499)
<b>Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ/ծախս</b>	<b>6</b>	<b>119,083</b>	<b>89,643</b>	<b>340,956</b>	<b>231,345</b>
Արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ/ (վնաս)	7	(7,675)	(8,463)	(3,238)	9,160
Այլ եկամուտներ	8	74,188	72,429	175,705	249,405
Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման ծախս	9	(15,468)	(1,846)	(42,695)	(24,866)
Անձնակազմի գծով ծախսեր	10	(70,983)	(57,736)	(216,837)	(175,555)
Հիմնական միջոցների մաշվածություն	17	(9,428)	(7,642)	(27,136)	(19,884)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	18	(346)	(270)	(1,037)	(770)
Այլ ծախսեր	11	(30,001)	(27,566)	(87,160)	(65,284)
<b>Շահույթ մինչև հարկվելը</b>		<b>59,370</b>	<b>58,549</b>	<b>138,558</b>	<b>203,551</b>
Շահութահարկի գծով ծախս	12	(12,630)	(11,818)	(28,766)	(40,111)
<b>Ժամանակաշրջանի շահույթ (վնաս) հարկումից հետո</b>		<b>46,740</b>	<b>46,731</b>	<b>109,792</b>	<b>163,440</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
<b>Ընդամենը ժամանակաշրջանի</b>					
<b>Համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>46,740</b>	<b>46,731</b>	<b>109,792</b>	<b>163,440</b>

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 11.10.2013թ

Կ.Տ.

Վարկային կազմակերպության  
գլխավոր գործադիր տնօրեն

  
Ա.Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ

  
Ն.Կիրակոսյան



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 7)

Ֆինանսական վիճակի մասին

<30> Սեպտեմբեր 2013թ.

<<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ, ք.Երևան, Քաջազունու 18

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթ.	30.09.2013թ. (չստուգված)	31.12.2012թ. (ստուգված)
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և Բանկային հաշիվներ	13	236,540	164,521
Ավանդներ բանկերում	14	439,116	589,116
Հաճախորդներին տված վարկեր և այլ փոխառություններ	15	4,337,923	3,676,611
Լիզինգի գծով ստացվելիք գումարներ	16	168,400	167,882
Հիմնական միջոցներ	17	79,575	95,300
Ոչ նյութական ակտիվներ	18	9,416	10,455
Այլ Ակտիվներ	19	46,596	15,411
<b>Ընդամենը՝ Ակտիվներ</b>		<b>5,317,566</b>	<b>4,719,296</b>
<b>Կապիտալ և Պարտավորություն</b>			
Փոխառություններ	20	4,242,639	3,727,561
Ընթացիկ շահութահարկի պարտավորություն		28,766	40,348
Հետաձգված հարկային պարտավորություն	12	4,342	4,342
Այլ Պարտավորություններ	21	77,474	110,450
<b>Ընդամենը Պարտավորություններ</b>		<b>4,353,221</b>	<b>3,882,701</b>
Կապիտալ			
Կանոնադրական Կապիտալ	22	560,891	488,783
Զբաղիչված շահույթ		403,454	347,812
<b>Ընդամենը Կապիտալ</b>		<b>964,345</b>	<b>836,595</b>
<b>Ընդամենը՝ Պարտավորություններ և Կապիտալ</b>		<b>5,317,566</b>	<b>4,719,296</b>

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 11.10.2013թ

Կ.Տ.  
 Վարկային կազմակերպության  
 գլխավոր գործադիր տնօրեն \_\_\_\_\_ Ա.Գաբրիելյան  
 Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_ Ն.Կիրակոսյան



Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի  
2010 թվականի հունիսի 8-ի թիվ 126-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի

Ենթահավելված 8

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին (ձև թիվ 8)

<30> Սեպտեմբեր 2013թ.

<<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ. ք. Երևան, Քաջագնուհուռ 18  
(կարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

Ներկայացված տվյալներ	Կանոնադրական կապիտալ			4	5	6	7	8	9	10	11	12	13
	1	2	3										
<b>Սեփական կապիտալի տարրերի անվանումը</b>	Լուսավորողի ցուցիչի տեղ	Լուսավորողի ցուցիչի տեղ	Վճարման տես										
	390,957		390,957							126,204	517,161		517,161
	390,957	0	390,957	0	0	0	0	0	0	126,204	517,161	0	517,161
	97,826	0	97,826	0	0	0	0	0	0	0	97,826		97,826
	97,826		97,826								97,826		97,826
			0	0								0	
<b>1. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբում առ 01 հունվարի 2012թ. (ստուգված)</b>	390,957		390,957										517,161
1.1. Հաշվապահական հաշվառման բաղադրական փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը			0								0		0
<b>2. Վերահաշվարկված մնացորդը</b>	390,957	0	390,957	0	0	0	0	0	0	126,204	517,161	0	517,161
<b>3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝</b>	97,826	0	97,826	0	0	0	0	0	0	0	97,826		97,826
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	97,826		97,826								97,826		97,826
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և ըրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին			0								0		0
<b>4. Համապարփակ եկամուտ</b>			0										0
<b>5. Շահութաբաժիններ</b>			0							163,440	163,440	0	163,440
<b>6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝</b>			0								0		0

Նախորդ հաշվետու ժամանակաշրջան (1 աղյուսակ)

6.1. Ռոպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում	0								0	0
<b>7. Ներքին շարժեր, այդ թվում՝</b>	<b>0</b>								<b>0</b>	<b>0</b>
7.1. Մասնամասնակց գլխավոր պահուստի	0								0	0
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	0								0	0
7.3. Էմիսիոն վնասի ծածկում	0								0	0
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	0								0	0
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	0								0	0
<b>8. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջում</b> <b>առ 30 սեպտեմբերի 2012թ. (չստուգված)</b>	<b>488,783</b>							<b>289,644</b>	<b>778,427</b>	<b>778,427</b>
<b>Հաշվետու ժամանակաշրջան (II աղյուսակ)</b>										
<b>9. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում</b> <b>առ 01 հունվարի 2013թ. (ստուգված)</b>	<b>488,783</b>							<b>347,812</b>	<b>836,595</b>	<b>836,595</b>
9.1. Հաշվապահական հաշվառման բարդարկանության փոփոխությունների բնիանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը	0							<b>(54,150)</b>	<b>(54,150)</b>	<b>(54,150)</b>
<b>10. Վերանաշխարհված մնացորդը</b>	<b>488,783</b>							<b>293,662</b>	<b>782,445</b>	<b>782,445</b>
<b>11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝</b>	<b>0</b>							<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	72,108								72,108	72,108
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին	0								0	0
<b>12. Համապարփակ եկամուտ</b>	<b>0</b>							<b>109,792</b>	<b>109,792</b>	<b>109,792</b>
<b>13. Շահութաբաժիններ</b>	<b>0</b>							<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝</b>	<b>0</b>							<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
14.1. Ռոպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում	0								0	0
<b>15. Ներքին շարժեր, այդ թվում՝</b>	<b>0</b>							<b>0</b>	<b>0</b>	<b>0</b>
15.1. Մասնամասնակց գլխավոր պահուստի	0								0	0
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում	0								0	0
15.3. Էմիսիոն վնասի ծածկում	0								0	0
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում	0								0	0
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր	0								0	0
<b>16. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում</b> <b>առ 30 սեպտեմբերի 2013թ. (չստուգված)</b>	<b>560,891</b>							<b>403,454</b>	<b>964,345</b>	<b>964,345</b>



Կարկային կազմակերպության  
 գլխավոր գործադիր տնօրեն  
 Ա. Գաբրիելյան  
 Գլխավոր հաշվապահ  
 Ն. Կիրակոսյան

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 11.10.2013թ

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 9)**

Դրամական միջոցների հոսքերի մասին

<30> Սեպտեմբեր 2013թ.

**<<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ, ք.Երևան, Քաջազնունու 18**

(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	30.09.2013թ. (չստուգված)	30.09.2012թ. (ստուգված)
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Ստացված տոկոսներ	563,859	271,858
Վճարված տոկոսներ	(272,234)	(59,116)
Ավանդի նվազում (ավելացում)		(452,187)
Ստացված զուտ կրմիսիոն եկամուտներ	24,713	19,013
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ մճառումներ	(149,275)	(135,275)
Վճարված հարկեր	(63,446)	(49,377)
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր՝ նախքան փոփոխությունները գործառնական ակտիվներում և ստամոտողություններում</b>	<b>103,617</b>	<b>(405,084)</b>
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	19,000	175,419
Ֆինանսական վարձակալության դիմաց ստացվելիք գումարների նվազում (ավելացում)	(3,386)	8,042
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	(743,951)	(167,037)
<b>Չուր դրամական հոսքեր գործառնական գործունեությունից՝ նախքան շահութահարկը</b>	<b>(624,720)</b>	<b>(388,660)</b>
Վճարված շահութահարկ	(68,690)	(12,553)
<b>Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>	<b>(693,410)</b>	<b>(401,213)</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Հիմնական միջոցների օտարում (ծեղքերում)	(10,791)	(22,944)
Ոչ նյութական ակտիվների օտարում (ծեղքերում)		(4,757)
Դրամական միջոցների զուտ հեքքեր այլ ներդրումային գործունեությունից	56,519	97,917
<b>Չուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>	<b>45,728</b>	<b>70,216</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր</b>		
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	564,867	610,062
<b>Չուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>	<b>564,867</b>	<b>610,062</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ</b>	<b>(82,815)</b>	<b>279,065</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքները ժամանակաշրջանի սկզբին</b>	<b>753,638</b>	<b>252,548</b>
Արտարժույթի փոխարժեքային ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	3,395	19,833
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամանակաշրջանի վերջում (ձև.13, 14)</b>	<b>674,218</b>	<b>551,446</b>

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 11.10.2013թ

Կ.Տ.

Վարկային կազմակերպության  
գլխավոր գործադիր տնօրեն



Գլխավոր հաշվապահ

*Ա. Գաբրիելյան*

Ա. Գաբրիելյան

*Ն. Կիրակոսյան*

Ն. Կիրակոսյան

**ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ

Վարկային կազմակերպության անվանումը <<Ֆարմ Կրեդիտ Արմենիա>> ՈՒՎԿ ԱԿ

Ամսաթիվը 01/07/13

30/09/13

		(հազար դրամ)		
Նորմատիվներ	Փաստացի մեծությունը	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը	
	1	2	3	4
Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	560,891	150,000	150,000	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	982,739	150,000	150,000	խախտում առկա չէ
Ն1 ընդհանուր կապիտալի և դիսկոլվ կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցության նվազագույն չափը			10.0%	
Մեկ փոխառուի գծով դիսկի առավելագույն չափը			25.0%	

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 11.10.2013թ



Վարկային կազմակերպության  
Գլխավոր գործադիր տնօրեն

*[Signature]*  
Ա. Գաբրիելյան

Գլխավոր հաշվապահ

*[Signature]*  
Ն. Կիրակոսյան

Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ընդունված «Կանոնակարգ 14»-ի 12.1 կետի «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ի կանոնադրության՝ «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ն հրապարակային օֆերտանների միջոցով փոխառություններ չի ներգրավում, հետևաբար կազմակերպության վրա չեն տարածքում «Ընդհանուր կապիտալի և դիսկոլվ կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ)» և «Մեկ փոխառուի գծով դիսկի առավելագույն չափը»:



# Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

## 1. Հիմնական գործունեություն

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն Առևտրային Կոոպերատիվը գրանցվել (ստեղծվել) է 18 սեպտեմբերի 2007թ.-ին Կենտրոնական բանկի խորհրդի թիվ 43 որոշմամբ: Կազմակերպությունը գրանցված է ՀՀ ք. Երևան, Քաջազնունու 18 հասցեում և գործունեություն է իրականացնում նույն հասցեում:

Կազմակերպությունը փոխառություններ է ներգրավում իր Փայատերերից և իրավաբանական անձանցից: Կազմակերպությունը իր կանոնադրության 3.3 կետի համաձայն հրապարակային օֆերտաների միջոցով փոխառություններ չի ներգրավում:

Համաձայն կազմակերպության կանոնադրության 3.1 կետի թ. ենթակետի իր գործառնությունները իրականացնում է անկանխիկ ձևով:

## 2. Հայաստանյան գործարար միջավայրը

Հայաստանի քաղաքական և տնտեսական միջավայրը չի կարելի դեռևս համարել կայուն զարգացող: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն զարգացած երկրներում: Հետևաբար, Հայաստանում ծավալած գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Կազմակերպության գործունեության վրա կանխատեսելի ապագայում: Կից ներկայացվող հաշվետվությունները չեն արտացոլում այն ճշգրտումները, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների՝ հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նշված ճշգրտումները, եթե կլինեն այդպիսիք, կարտացոլվեն Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, որում դրանք ի հայտ կգան և կգնահատվեն:

Բացի այդ, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործունեության ծավալները ֆինանսական շուկաներում:

Գնանշումները ցածր իրացվելիություն ունեցող շուկաներում, հնարավոր է, չարտացոլեն ֆինանսական գործիքների իրական արժեքները, որոնք որոշվում են արդյունավետ, ակտիվ շուկայում՝ բազմաթիվ պատրաստական վաճառողներով ու գնորդներով:

## 3. Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

### Համապատասխանությունը

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից մշակված և հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՖՀՆՄՍ) և Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների համաձայն: Համեմատական տեղեկատվությունը և ֆինանսական հաշվետվությունները ներառում են



Կազմակերպության ֆինանսական գործունեության արդյունքները և դրամական հոսքերը 30.09.2013թ. ժամանակահատվածի համար:

### ***Չափման հիմքերը***

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

### ***Գործառնական և ներկայացման արժույթ***

Կազմակերպության գործառնական արժույթը այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Կազմակերպությունը: Կազմակերպության գործառնական և ներկայացման արժույթը ՀՀ դրամն է, քանի որ այս արժույթը լավագույն ձևով է արտացոլում Կազմակերպության գործարքների և իրադարձությունների տնտեսական բովանդակությունը: Կազմակերպությունը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ օրենսդրական պահանջներին և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Կազմակերպության հաշվապահական հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՆՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազար դրամների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս ՀՀ դրամը ազատ փոխարկելի չէ:

### ***Վերադասակարգումներ***

Անհրաժեշտության դեպքում, համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխություններին համապատասխանելու համար:

## **4. Հաշվապահական հաշվառման կարևոր սկզբունքները**

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ կիրառվել են հետևյալ սկզբունքները: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

### **Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտերը կհոսեն Կազմակերպություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել: Հետևյալ չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամտի ճանաչումը:





**Տոկոսային ծախսեր և եկամուտներ**

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող կամ ֆինանսական արդյունքներով ճշտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»:

Եթե ֆինանսական ակտիվները կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նվազում է արժեզրկումից կորուստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

**Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր**

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

**Արտարժույթային գործարքներից եկամուտները (վնասը)** ներառում է արտարժույթի առուվաճառքից զուտ եկամուտը (վնասը) և արտարժույթով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտը (վնասը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահվող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ/ (վնաս)» հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «այլ եկամուտ» կամ «այլ ծախս» հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Կազմակերպության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

	30 Սեպտեմբեր 2013	30 Սեպտեմբեր 2012
ՀՀ դրամ/ 1ԱՄՆ դոլար	405.29	406.25
ՀՀ դրամ/ 1 Եվրո	546.82	525.73



## **Հարկում**

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գուղվիլի կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններում ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված շահութահարկը առաջանում է այն ժամանակավոր տարբերությունների գծով, ինչպիսիք են դուստր, ասոցիացված կամ համատեղ ձեռնարկություններում ներդրումներից առաջացողները, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամկետները կառավարելի են և, հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները մոտ ապագայում չեն հակադարձվի:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով կազմակերպության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են «այլ ծախսեր» հոդվածում:

## **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամը և հաշիվները բանկերում, որոնք կարճ ժամանակահատվածում կարող են փոխարկվել կանխիկ դրամի, և արժեքի փոփոխման չնչին ռիսկ են պարունակում:

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:



### ***Հաշիվներ բանկերում***

Իր բնականոն գործունեության ընթացքում Կազմակերպությունն օգտագործում է բանկերում բացված ընթացիկ կամ տարբեր ժամկետներով ավանդային հաշիվները: Ֆիքսված ժամկետով ավանդները հաշվառվում են անորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն միջոցները, որոնք չունեն ֆիքսված ժամկետներ, անորտիզացվում են ղեկավարության կողմից գնահատված ժամկետներում:

### ***Ֆինանսական գործիքներ***

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առուվաճառքի դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռքբերված գործիքները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները չափվում են իրական արժեքով՝ գումարած, ներդրումների դեպքում, գործարքին անմիջապես վերագրելի ծախսերը, բացառությամբ ֆինանսական արդյունքներում ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ներդրումները:

Սկզբնական ճանաչումից հետո, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններին չվերաբերող բոլոր ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վաճառքի համար պահվողները) չափվում են անորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հետագայում հաշվառվում են իրական արժեքով:

Կազմակերպությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգել է ըստ հետևյալ դասերի՝ վարկեր և դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների դասակարգումը ըստ դասերի իրականացվում է ձեռքբերման պահին՝ առաջնորդվելով ղեկավարության կողմից հաստատված կանոններով: Սկզբնական ճանաչումից հետո Կազմակերպությունը կարող է, հնարավորության և անհրաժեշտության դեպքում, վերադասակարգել իր ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

### ***Վարկեր և դեբիտորական պարտքեր***



Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք առաջանում են, երբ Կազմակերպությունը անմիջապես միջոցներ է տրամադրում պարտապանին՝ առանց դեբիտորական պարտքը վաճառելու մտադրությամբ:

Հետագայում վարկի հաշվեկշռային արժեքը որոշվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրամադրված վարկերը, որոնք չունեն մարման հաստատուն ժամկետներ, հաշվառվում են ակնկալվող մարման ժամկետի վրա հիմնված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկման կորուստների պահուստներով:

***Վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ***

Վաճառքի համար մատչելի ներդրումները հանդիսանում են պարտքային և կապիտալի գործիքներ, որոնք Կազմակերպությունը մտադրություն ունի պահել անորոշ ժամանակով, որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության կամ տոկոսադրույքների, փոխարժեքի կամ կապիտալի գների փոփոխման պահանջներից: Սկզբնական գնահատումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, որի փոփոխությունից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է որպես կապիտալի առանձին բաղադրիչ՝ մինչև ներդրումի ապաճանաչումը կամ դրա արժեզրկման ճանաչումը, որի դեպքում նախկինում կապիտալում ճանաչված շահույթի կամ վնասի ընդհանուր գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուամենայնիվ, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսագումարները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքներից շահաբաժինները ճանաչվում են եկամուտների ու ծախսերի մասին հաշվետվությունում, Կազմակերպության՝ վճարումները ստանալու իրավունքի հաստատման պահից:

Կազմակերպված ֆինանսական շուկաներում ակտիվորեն շրջանառվող ներդրումների իրական արժեքը որոշվում է բորսայում հաշվեկշռի օրվա դրությամբ փակման պահին տվյալ ակտիվի գծով գնանշված գնով: Ակտիվ շուկա չունեցող ներդրումների իրական արժեքը որոշվում է օգտագործելով գնահատման մեթոդները:

Նման մեթոդները ներառում են՝ «պարզած ձեռքի» սկզբունքով շուկայական գործառնությունները, հղումները այլ գործիքների ընթացիկ շուկայական արժեքներին, որոնք եականորեն նույնն են, և դիսկոնտավորված դրամական հոսքերի վերլուծությունը: Այլապես ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկման համար որևէ հատկացում:

***Ֆինանսական ակտիվների արժեզրկում***

Հաշվեկշռային ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման աստիճանը:

***Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ***

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ  
 1-28 ծանոթագրությունները կազմում են 2013 թ. 3-րդ եռամսյակ  
 ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:



Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում է արժեզրկված, և արժեզրկման վնասը ճանաչվում է այն ժամանակ, երբ գոյություն ունի ակտիվի սկզբնական ճանաչմանը հաջորդող իրադարձությունների («ծախսային իրադարձությունների») արդյունքում առաջացած արժեզրկման օբյեկտիվ վկայություն, և այդ ծախսային իրադարձությունը (իրադարձությունները) ազդեցություն ունի ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի ապագա դրամական հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Արժեզրկման օբյեկտիվ վկայության որոշման համար օգտագործվող չափանիշներից են՝ պարտապանի կամ պարտապանների խմբի էական ֆինանսական դժվարությունների մասին վկայող ցուցանիշները (օրինակ՝ սեփական միջոցների գործակիցը, զուտ եկամուտ/վաճառք գործակիցը), տոկոսների և մայր գումարի վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ այլ պայմանների խախտումները, գրավի արժեքի նվազումը, սնանկացման կամ ֆինանսական այլ վերակազմավորման հավանականությունը, և երբ տեսանելի տվյալները վկայում են չափելի նվազման մասին ակնկալվող ապագա դրամական հոսքերում, ինչպիսիք են փոփոխությունները պարտավորություններում կամ տնտեսական պայմաններում, որոնց վերագրվում են թերացումները:

Կազմակերպությունը նախ գնահատում է արժեզրկման օբյեկտիվ վկայության առկայությունը անհատական ֆինանսական ակտիվների համար, որոնք առանձնաբար նշանակալի են, և անհատական կամ խմբային ֆինանսական ակտիվների համար, որոնք առանձնաբար նշանակալի չեն: Եթե պարզվել է, որ գոյություն չունի արժեզրկման օբյեկտիվ վկայություն անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար՝ անկախ էականության աստիճանից, ապա ակտիվը ներառվում է նույնանման վարկային ռիսկ ունեցող ֆինանսական ակտիվների խմբի մեջ, և ֆինանսական ակտիվների այդ խումբը ենթարկվում է խմբային գնահատման: Այն ակտիվները, որոնք անհատականորեն են ենթարկվում արժեզրկման գնահատմանը, և որոնց գծով արժեզրկումը ճանաչվել է կամ շարունակում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման խմբային գնահատման մեջ:

Եթե գոյություն ունի ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վնասի օբյեկտիվ վկայություն, ապա վնասի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված այն ապագա դրամական հոսքերի իրական արժեքի միջև տարբերությունը (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի), որոնք զեղչվել են՝ օգտագործելով ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը (այսինքն, սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքը): Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստի հաշվի միջոցով: Վնասի գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարումը պահվող ներդրումը ունի փոփոխուն տոկոսադրույք, ապա արժեզրկման ցանկացած վնասի զեղչման դրույքը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքն է: Կազմակերպությունը կարող է չափել արժեզրկման վնասը գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Գրավով ապահովված ֆինանսական ակտիվի ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը արտահայտում է գրավի իրացումից առաջացած դրամական հոսքերը՝ հանած գրավի ձեռք բերման և վաճառքի հետ կապված ծախսերը, անկախ գրավի իրացման հավանականությունից:



Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, Ֆինանսական ակտիվները խմբավորվում են Կազմակերպության՝ վարկային դասակարգման ներքին համակարգի հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի այնպիսի բնորոշիչները, ինչպիսիք են ակտիվի տեսակը, արդյունաբերության ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետային կարգավիճակը և այլ նմանատիպ գործոններ:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերի փոփոխությունների գնահատումը պետք է արտահայտի և համապատասխանի տեսանելի կապակցված տվյալների փոփոխություններին (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույքներում, գույքի գներում, վճարման կարգավիճակում, կամ խմբում արժեզրկումը մատնանշող այլ գործոններում կամ դրանց ծավալներում): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդոլոգիան և վարկածները անընդհատ վերանայվում են Կազմակերպության կողմից, որպեսզի նվազեցվի գնահատված և իրական վնասների միջև եղած տարբերությունները:

Վարկերը՝ կապակցված պահուստների հետ մեկտեղ, դուրս են գրվում, երբ գոյություն չունի ապագայում վարկի հավաքագրելու իրատեսական հեռանկար, և բոլոր գրավներն իրացվել են կամ փոխանցվել Կազմակերպությանը: Եթե հաջորդող տարում գնահատված արժեզրկման վնասի գումարը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչմանը հաջորդող իրադարձությունների արդյունքում, ապա նախկինում ճանաչված արժեզրկման վնասը ավելացվում կամ նվազեցվում է պահուստային հաշիվը ճշգրտելու միջոցով: Եթե ապագա դուրս գրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

## **Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում**

### ***Ֆինանսական ակտիվներ***

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- լրացել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը
- Կազմակերպությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ համաձայն փոխանցման համաձայնագրի, և
- Կազմակերպությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Կազմակերպությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը և չի փոխանցել ու չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը ճանաչվում է մինչև Կազմակերպության՝ ֆինանսական ակտիվում շարունակական մասնակցությունը: Փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև ստացած շարունակական մասնակցությունը որոշվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը կամ փոխհատուցման վճարվելիք գումարը, որ Կազմակերպությունից կարող է պահանջվել:



### **Ֆինանսական պարտավորություններ**

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է այն ժամանակ, երբ այն մարվում կամ չեղյալ է համարվում, կամ լրանում է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է էականորեն տարբերվող պայմաններով, բայց միևնույն փոխառուին վերաբերող պարտավորությամբ, կամ էականորեն փոփոխվում են գոյություն ունեցող պարտավորության պայմանները, նման փոխանակումը կամ փոփոխությունը պետք է հանգեցնի սկզբնական պարտավորության ապաճանաչման և նոր պարտավորության ճանաչման, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

### **Վարձակալություն**

#### **Գործառնական վարձակալություն՝ Կազմակերպությունը որպես վարձակալ**

Ակտիվների վարձակալությունը, որոնց սեփականության հետ կապված ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի կողմից, դասակարգվում է որպես գործառնական: Գործառնական վարձակալությունից առաջացող վարձավճարները ծախս են ճանաչվում գծային մեթոդով վարձակալության ժամանակահատվածի ընթացքում և ներառվում են այլ գործառնական ծախսերում:

#### **Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Եթե հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ժամանակավոր չհամարվող պայմանների արդյունքում, համապատասխան ակտիվը նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույթաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարի )	Դրույթաչափ (%)
Շենքեր	20	5
Փոխադրամիջոցներ	5	20
Գույք և գրասենյակային սարքավորումներ	5	20
Կապի միջոցներ և սարքավորումներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20
Համակարգիչներ	1	100
Մինչև 50 հազ դրամ արժողությամբ հիմնական միջոցներ	1	100

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք տեղի են



ունեցել: Կապիտալ բնույթի վերանորոգման ծախսերը ներառվում են ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կհոսեն դեպի Կազմակերպություն: Կապիտալ վերանորոգումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օտարումից ծախսերը և եկամուտները որոշվում են՝ համեմատելով ակտիվի օտարումից զուտ մուտքերն ու հաշվեկշռային արժեքը և ներառվում են գործառնական եկամտի մեջ:

Երբ վաճառվում են վերագնահատված ակտիվները, օտարված ակտիվին վերագրելի և վերագնահատման պահուստում ներառված գումարները վերագրվում են չբաշխված շահույթին:

### ***Ոչ նյութական ակտիվներ***

Ոչ նյութային ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյո՞ք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Համակարգչային ծրագրերի պահպանմանը վերագրելի ծախսերը ծախս են ճանաչվում առաջացման պահին:

### ***Փոխառություններ***

Փոխառությունները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների և հիմնադիր կողմի նկատմամբ պարտավորությունները, սկզբնապես ճանաչվում են ստացված զուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ





ապահովում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

### ***Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին***

Կազմակերպությունը ՀՀ պետական կենսաթոշակային համակարգից բացի որևէ այլ համակարգ չի կիրառում: ՀՀ կենսաթոշակային համակարգը պահանջում է գործատուի կողմից ընթացիկ հատկացումների հաշվարկում, որոնք կազմում են աշխատակիցների համախառն աշխատավարձի որոշակի տոկոսը: Համապատասխան ծախսը վերաբերվում է աշխատավարձի ստացման ժամանակահատվածին: Բացի այդ, Կազմակերպությունը չունի հաշվեգրում պահանջող հետթոշակային նպաստներ կամ այլ էական վճարներ:

### ***Պահուստներ***

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Կազմակերպությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

### ***Շահաբաժիններ***

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն և հաշվեկշռային անսաթվի դրությամբ նվազեցվում են կապիտալից միայն այն դեպքում, եթե դրանք հայտարարվել են մինչև հաշվեկշռային անսաթվը կամ այդ անսաթվին: Շահաբաժինները բացահայտվում են, երբ դրանք առաջարկվում են մինչև հաշվեկշռային անսաթվը, կամ առաջարկվում կամ հայտարարվում են հաշվեկշռային անսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հաստատումը հրապարակման համար:

### ***Հաշվանցում***

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

## **5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

ՖՀՆՄՍ–ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Կազմակերպության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների անսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների



Ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի և եկամուտների վրա: Պատմական փորձի և տվյալ պայամաններում հիմնավորված այլ գործոնների վրա հիմնված գնահատումներն ու դրանց հետ կապված ենթադրությունները հնարավորություն են տալիս դատողություններ անել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք հնարավոր չէ որոշել այլ աղբյուրներից: Բոլոր դեպքերում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

***Փոխկապակցված կողմերի հետ գործառնություններ***

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական գներով: Գործող շուկայի բացակայության դեպքում շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքների կիրառումը որոշվում է դատողությունների հիման վրա: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

***Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկման պահուստներ***

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Կազմակերպությունը վերանայում է իր խնդրահարույց վարկերն ու փոխատվությունները՝ որոշելու համար, թե արդյո՞ք արժեզրկման պահուստ պետք է նախատեսվի ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է որոշել պահանջվող պահուստի չափը: Նման գնահատումները հիմնված են մի շարք գործոնների վերաբերյալ ենթադրությունների վրա, և իրական արժեքները կարող են տարբերվել, որը կհանգեցնի պահուստի գումարի հետագա փոփոխությունների:

Առանձնաբար նշանակալի վարկերի և փոխատվությունների համար ստեղծված հատուկ պահուստից բացի, Կազմակերպությունը ստեղծում է նաև արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Հաշվի առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ցուցանիշների վատթարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ, տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումը:

***Հարկային օրենսդրություն***

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես՝ ծանոթագրություն 23-ը:

**6. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր**



	30.09.2013	հազ. դրամ 30.09.2012
Վարկեր և փոխառություններ հաճախորդներին Պահանջներ բանկերի նկատմամբ	554,301 19,869	377,269 12,575
<b>Ընդամենը տոկոսներ և նմանատիպ եկամուտներ</b>	<b>574,170</b>	<b>389,844</b>
Տոկոսային ծախսեր ստացված փոխառությունների դիմաց Այլ տոկոսային ծախսեր	(233,214) -	(158,499)
<b>Ընդամենը տոկոսներ և նմանատիպ ծախսեր</b>	<b>(233,214)</b>	<b>(158,499)</b>
<b>Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր</b>	<b>340,956</b>	<b>231,345</b>

## 7. Արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ (վնաս)

	30.09.2013	հազ. դրամ 30.09.2012
Արտարժույթի առ ու վաճառքից ստացված զուտ շահույթ կամ (վնաս)	(64)	(4)
Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն	(3,174)	9,164
<b>Ընդամենը Արտարժույթային գործարքներից ստացված զուտ շահույթ/ (վնաս)</b>	<b>(3,238)</b>	<b>9,160</b>

## 8. Այլ եկամուտներ

	30.09.2013	հազ. դրամ 30.09.2012
Ստացված տույժեր և տուգանքներ	9,278	4,502
Եկամուտներ շնորհներից	165,006	242,469
Այլ եկամուտներ	1,268	23
ՀՄ օտարումից օգուտներ	153	2,411
<b>Ընդամենը այլ եկամուտներ</b>	<b>175,705</b>	<b>249,405</b>

## 9. Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման (ծախս)/եկամուտ

	հազ. դրամ
«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ 1-28 ծանոթագրությունները կազմում են 2013 թ. 3-րդ եռամսյակ ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:	13



30.09.2013

30.09.2012

Վարկերի գծով արժեզրկման ծախս	(39,547)	(24,459)
Լիզինգի գծով արժեզրկման ծախս	(3,162)	(148)
Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հատուկ պահուստ	14	(259)
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման ծախս</b>	<b>(42,695)</b>	<b>(24,866)</b>

### 10. Անձնակազմի գծով ծախսեր

30.09.2013

հազ. դրամ  
30.09.2012

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	(200,847)	(160,645)
Սոցիալական ապահովագրության հատկացումներ	-	(12,142)
Անձնակազմի ուսուցման ծախսեր	(15,990)	(2,768)
<b>Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր</b>	<b>(216,837)</b>	<b>(175,555)</b>

### 11. Այլ ծախսեր

հազ. դրամ

30.09.2013

30.09.2012

Գովազդային ծախսեր	(1,534)	(5,311)
Ներկայացուցչական ծախսեր	(2,256)	(438)
Գործուղման ծախսեր	(10,452)	(3,735)
Հեռահաղորդակցության ծախսեր	(4,887)	(4,100)
Գործառնական վարձակալություն	(19,926)	(14,018)
Շահութահարկից տարբեր հարկեր և տուրքեր	(2,016)	(1,154)
Աուդիտի և խորհրդատվական այլ ծախսեր	(8,769)	(3,188)
Անվտանգություն	(2,774)	(2,125)
Ավտոմեքենայի սպասարկման ծախսեր	(9,183)	(6,863)
Գրասենյակային ծախսեր	(2,670)	(2,447)
Ապահովագրական ծախսեր	(3,678)	(354)
Ֆին.հաշտարարի գծով ծախսեր	(2,459)	(1,591)
Վարկերի տրամադրման գծով ծախսեր	(3,934)	-
Միջնորդավճարի ծախսեր	(924)	-
Սարքավորումների գծով սպասարմկան ծախսեր	(1,344)	-
Այլ ծախսեր	(10,354)	(19,960)
<b>Ընդամենը այլ ծախսեր</b>	<b>(87,160)</b>	<b>(65,284)</b>

### 12. Շահութահարկի գծով ծախս

30.09.2013

հազ. դրամ  
30.09.2012

Ընթացիկ հարկային ծախսեր	(28,766)	(40,111)
-------------------------	----------	----------

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ  
1-28 ծանոթագրությունները կազմում են 2013 թ. 3-րդ եռամսյակ  
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:



Հետաձգված հարկեր

**Ընդամենը շահութահարկի գծով ծախսեր**

**(28,766)**

**(40,111)**

ՀՀ-ում շահութահարկի դրույքաչափը 20% է (2012՝ 20%):

ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՆՄՍ-ի միջև եղած տարբերությունը առաջացնում է ժամանակավոր տարբերություններ մի շարք ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների միջև՝ ֆինանսական հաշվետվության և շահութահարկի հաշվարկման առումով: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է՝ կիրառելով 20% հիմնական դրույքաչափը:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև թվային փոխկապակցվածությունը:

	30.09.2013	Արդյունավետ տոկոսադրույք (%)	2012	Արդյունավետ տոկոսադրույք (%)
Շահույթ մինչև հարկումը	138,558		222,594	
Շահութահարկ 20 %	27,712	20%	44,519	20%
Զնվազեցվող ծախսեր	-		5,120	
Դրական/ բացասական փոխարժեքային տարբերությունը	-		(1,333)	
Նախորդ ժամանակաշրջանի ծախսեր	-		(1,828)	
Ազգային և միջ. հաշվառումների տարբ.	1,054		(3,906)	
<b>Ընդամենը շահութահարկի գծով ծախսեր</b>	<b>28,766</b>		<b>50,384</b>	

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ

	2011	ՖԱՄՀ ճանաչված	2012
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	1,828	1,003	2,831
<b>Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ</b>	<b>1,828</b>	<b>1,003</b>	<b>2,831</b>
Արժեզրկման և բանկային հաշիվների պահուստներ	(173)	(7,000)	(7,173)
<b>Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ</b>	<b>(173)</b>	<b>(7,000)</b>	<b>(7,173)</b>



Ձուտ հետաձգված հարկային ակտիվներ

1,655	(5,997)	(4,342)
-------	---------	---------

	2010	ՖԱՄՐ ճանաչված	2011
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	2,208	(380)	1,828
Արժեզրկման պահուստներ	(325)	325	-
<b>Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ</b>	<b>1,883</b>	<b>(55)</b>	<b>1,828</b>
Արժեզրկման և բանկային հաշիվների պահուստներ	(683)	510	(173)
<b>Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ</b>	<b>(683)</b>	<b>510</b>	<b>(173)</b>
<b>Ձուտ հետաձգված հարկային ակտիվներ</b>	<b>1,200</b>	<b>455</b>	<b>1,655</b>

### 13. Կանխիկ դրամական միջոցներ և հաշիվներ բանկերում

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Բանկային հաշիվներ	236,505	164,521
Կուտակված տոկոս	35	-
<b>Ընդամենը դրամական միջոցներ</b>	<b>236,540</b>	<b>164,521</b>

### 14. Ավանդներ բանկերում

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Ժամկետային ավանդներ	437,713	589,116
Կուտակված տոկոս	1,403	-
<b>Ընդամենը ավանդներ բանկերում</b>	<b>439,116</b>	<b>589,116</b>

### 15. Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Վարկեր հաճախորդներին	4,457,370	3,713,748
Հանած վարկերի արժեզրկման պահուստը	(119,447)	(37,137)
<b>Ընդամենը վարկեր և փոխատվություններ հաճախորդներին</b>	<b>4,337,923</b>	<b>3,676,611</b>



Առ 30 սեպտեմբեր 2013թ. հաճախորդներին տրամադրված վարկերում և փոխառություններում ներառված տոկոսային եկամուտները կազմել են 49,719 հազար ՀՀ դրամ, իսկ ապագա ժամանակաշրջանի եկամուտները կազմում են 7,557 հազար ՀՀ դրամ:

Վարկերի ու փոխառությունների գծով արժեզրկման պահուստն ըստ դասերի ունի հետևյալ տեսքը

	Մասնավոր ծեռնարկություններ	Ֆիզիկական անձինք	Անհատ ծեռնարկատերեր	հազ. դրամ 30.09.2013 Ընդամենը
Առ 1 հունվար 2013	5,341	76,585	10,606	92,532
Ժամանակաշրջանի ծախսեր	4,370	18,244	4,301	26,915
Առ 30 սեպտեմբեր 2013	<b>9,711</b>	<b>94,829</b>	<b>14,907</b>	<b>119,447</b>
Դուրս գրված վարկեր Առ 30 սեպտեմբեր 2013		46,396	2,658	<b>49,054</b>
Անհատական արժեզրկում	2,909	28,600	1,922	33,431
Խմբային արժեզրկում	6,802	66,229	12,985	86,016
	<b>9,711</b>	<b>94,829</b>	<b>14,907</b>	<b>119,447</b>

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունը՝ ըստ հաճախորդների.

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Մասնավոր ծեռնարկություններ	352,615	265,898
Ֆիզիկական անձինք	3,410,013	2,953,651
Անհատ ծեռնարկատերեր	652,580	475,582
Կուտակված տոկոսներ	49,719	30,052
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	(7,557)	(11,435)
Հանած վարկի արժեզրկման պահուստը	<b>(119,447)</b>	<b>(37,137)</b>
<b>Ընդամենը վարկեր և փոխառություններ</b>	<b>4,337,923</b>	<b>3,676,611</b>

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ  
1-28 ծանոթագրությունները կազմում են 2013 թ. 3-րդ եռամսյակ  
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:



հաճախորդներին

Ֆիզիկական անձանց տրամադրած վարկերն ունեն հետևյալ տեսքը

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Գյուղատնտեսական	3,360,393	2,931,178
Այլ	49,620	22,473
<b>Ընդամենը վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (համախառն)</b>	<b>3,410,013</b>	<b>2,953,651</b>

Վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը 2012թ. և 2013թ. 30 սեպտեմբերի դրությամբ մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին: Տե՛ս ծանոթագրություն 25:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքների մասին տեղեկատվությունը բացահայտված է ծանոթագրություն 24-ում:

## 16. Լիզինգի գծով ստացվելիք գումարներ

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Լիզինգի գծով ստացվելիք գումարներ	212,185	206,607
Զճանաչված տոկոսային եկամուտներ	-37,196	-35,299
Արժեզրկման պահուստ	-6,589	-3,426
<b>Ընդամենը վարկեր և փոխատվություններ հաճախորդներին</b>	<b>168,400</b>	<b>167,882</b>

Լիզինգի գծով արժեզրկման պահուստն ըստ դասերի ունի հետևյալ տեսքը.

	Մասնավոր ծեռնարկություններ	Ֆիզիկական անձինք	Անհատ ծեռնարկատերեր	30.09.2013 Ընդամենը
Առ 1 հունվար 2013	382	3,044	-	3,426
Ժամանակաշրջանի ծախսեր	1,742	1,421	-	3,163
Առ 30 սեպտեմբեր 2013	<b>2,124</b>	<b>4,465</b>	<b>0</b>	<b>6,589</b>
Անհատական արժեզրկում	1,463	1,923	-	3,386
Խմբային արժեզրկում	201	3,002	-	3,203





1,664	4,925	0	6,589
-------	-------	---	-------

	Մասնավոր ծեռնարկություններ	Ֆիզիկական անձինք	Անհատ ծեռնարկատերեր	31.12.2012 Ընդամենը
Առ 1 հունվար 2012	41	1,580	-	1,621
տարեկան ծախսեր	341	1,464	-	1,805
Առ 31 Դեկտեմբեր 2012	<b>382</b>	<b>3,044</b>	<b>0</b>	<b>3,426</b>
Անհատական արժեզրկում հմբային արժեզրկում	-	-	-	-
	382	3,044	-	3,426
	<b>382</b>	<b>3,044</b>	<b>0</b>	<b>3,426</b>

Տեղաբաշխված լիզինգային գործարքների վերլուծությունը՝ ըստ հաճախորդների.

	30.09.2013	<u>հազ. դրամ</u> 31.12.2012
Մասնավոր ծեռնարկություններ	22,557	19,005
Ֆիզիկական անձինք	151,122	151,289
Կուտակված տոկոսներ	1,310	1014
Հանած արժեզրկման պահուստը	(6,589)	(3,426)
<b>Ընդամենը</b>	<b>168,400</b>	<b>167,882</b>

## 17. Հիմնական միջոցներ

հազ. դրամ

	Գույք և գրասենյակային սարքավորումներ	Համակարգչային սարքավորում	Փոխադրա- միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեք (շահագործման համձնված)					
01.01.13	19,743	28,282	98,380	14,742	161,147
Ավելացում	1,196	6,765	16,405	3,952	28,318

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ  
1-28 ծանոթագրությունները կազմում են 2013 թ. 3-րդ եռամսյակ  
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:



Օտարում (դուրս գրում)	(22)	0	0	0	(22)
Հաշվի տեղափոխում	357	2,181	15,910	2,151	20,599
30.09.13	<b>20,917</b>	<b>35,047</b>	<b>114,785</b>	<b>18,694</b>	<b>189,443</b>
<b>Հաշվեկշռային արժեք (չհաճազործվող)</b>					
01.01.13	21	480	16,183	1,414	18,098
Ավելացում	0	0	(16,183)	(1,263)	(17,446)
Օտարում (դուրս գրում)	0	0	0	0	0
30.09.13	<b>21</b>	<b>480</b>	<b>0</b>	<b>151</b>	<b>652*</b>
<b>Մաշվածք</b>					
01.01.13					
Սկզբնական մնացորդ	13,141	19,624	43,897	7,285	83,947
Կուտակված անորոշիզացիա	1,832	6,575	16,154	2,013	26,574
Կուտակված անորոշ. օգտագործում (դուրս գրում)	0	0	0	0	0
Հաշվի տեղափոխում	78	52	0	29	159
30.09.13	<b>14,973</b>	<b>26,199</b>	<b>60,051</b>	<b>9,298</b>	<b>110,521</b>
<b>Զուտ հաշվեկշռային արժեք</b>					
01.01.13	<b>6,623</b>	<b>9,138</b>	<b>70,666</b>	<b>8,871</b>	<b>95,300</b>
30.09.13	<b>5,965</b>	<b>9,328</b>	<b>54,734</b>	<b>9,547</b>	<b>79,574</b>

\*Նշված գույքը և համակարգչային սարքավորումը մատչելի չէ օգտագործման համար, քանի որ այն չի գտնվում համապատասխան վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով օգտագործելու համար:

## 18. Ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ

### Ձեռքբերված համակարգչային ծրագրեր

<b>Ինքնարժեք</b>	
Առ 01 հունվար 2013	13,315
Ավելացումներ	-
Օտարում (դուրս գրում)	-
<b>Առ 30 սեպտեմբեր 2013</b>	<b>13,315</b>
<b>Անորոշիզացիա</b>	
Առ 01 հունվար 2013	2,862
Անորոշիզացիոն հատկացումներ	1,037
Օտարում (դուրս գրում)	-
<b>Առ 30 սեպտեմբեր 2013</b>	<b>3,899</b>

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ  
1-28 ծանոթագրությունները կազմում են 2013 թ. 3-րդ եռամսյակ  
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:



Հաշվեկշռային արժեք  
Առ 30 սեպտեմբեր 2013

9,417

Առ 31 դեկտեմբեր 2012

10,455

## 19. Այլ ակտիվներ

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Կանխավճար հիմնական միջոցների ձեռք բերելու դիմաց	0	2,591
Կանխավճարների բյուջեին	29,290	2,313
Պահեստ	2,023	581
Լիզինգով տրամադրվելիք տրակտորներ		
Բռնագանձված գույք	4,252	4,252
Այլ կանխավճարներ և դեբիտորներ	11,031	5,674
<b>Ընդամենը այլ ակտիվներ</b>	<b>46,596</b>	<b>15,411</b>

## 20. Փոխառություններ

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ / ԳՖԿ ԾԻԳ	1,573,010	1,008,203
Համաշխարհային բանկի ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիության ծրագիր	2,601,866	2,602,515
Կուտակված տոկոսներ	67,763	116,843
<b>Ընդամենը ներգրավված փոխառություններ</b>	<b>4,242,639</b>	<b>3,727,561</b>

## 21. Այլ պարտավորություններ

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Կրեդիտորական պարտքեր, վճարվելիք գումարներ	7,211	8,648
Պարտավորություններ անձնակազմի նկատմամբ	3,632	5,511
Կրեդիտորական պարտքեր Կանոնադրական հիմնադրամի համալրման գծով	13,863	27,342
Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի գծով	242	406
Այլ պարտավորություններ	52,526	68,543
<b>Ընդամենը այլ պարտավորություններ</b>	<b>77,474</b>	<b>110,450</b>



## 22. Կապիտալ

Կանոնադրական կապիտալը 560,891 հազար ՀՀ դրամ է, որը կազմված է կոոպերատիվի 2,489 անդամների փայամասնակցությունից: Խոշոր փայամասնակցություն ունի «ԷՖ ԷԼ Սի ԷՅ Թրասթ» իրմնադրամը՝ 474,791 հազար ՀՀ դրամ:

## 23. Պայմանական պարտավորություններ

Հարկային ու իրավական պարտավորություններ

ՀՀ հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների կարիք ունի: Հաճախ դրանց մեկնաբանությունները տարակարծություններ են առաջացնում տարբեր հարկային և իրավասու մարմինների միջև:

Ղեկավարությունը համոզված է, որ իր Կազմակերպությունը գործունեություն է ծավալել համաձայն օրենսդրության պահանջների:

Առ 30 սեպտեմբերի 2013թ. Կազմակերպության դեմ չի ներկայացվել ոչ մի դատական հայց կամ բողոք:

Այդ պատճառով Կազմակերպությունը չի նախատեսել նման հարկային կամ դատական պարտավորությունների պահուստ:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով

Իր սովորական գործունեության ընթացքում Կազմակերպությունը կնքել է վարձակալության պայմանագիր իր գրասենյակների համար:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը ունի հետևյալ տեսքը.

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Մինչև 1 տարի	7,230	-
1-ից 2 տարի	-	18,075
3-ից 5 տարի	53,978	54,836
<b>Ընդամենը գործառնական վարձակալության պարտավորություն</b>	<b>61,208</b>	<b>72,911</b>

Ապահովագրություն

Կազմակերպության շարժական գույքն ապահովագրված է ԱՊՊԱ տեսակի ապահովագրությամբ: Կազմակերպությունը դեռևս ձեռք չի բերել ապահովագրություն այն պարտավորությունների գծով, որոնք առաջացել են սխալների կամ բացթողումների հետևանքով:

## 24. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ



Համաձայն ՀՀՍՍ 24–ի՝ «Փոխկապակցված կողմերի բացահայտում», կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Կազմակերպության ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

Փոխկապակցված կողմերի հետ գործարքների ծավալները, տարեվերջյան մնացորդները և տարվա կապակցված ծախսերն ու եկամուտները ունեն հետևյալ տեսքը.

	30.09.2013		հազ. դրամ 31.12.2012	
	Մասնակիցներ	Ղեկավար անձնակազմ և նրանց փոխկապակցված անձինք	Մասնակիցներ	Ղեկավար անձնակազմ և նրանց փոխկապակցված անձինք
<b>Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին</b>				
Վարկի մնացորդը տարվա սկզբին (համախառն)	-	47,928	-	49,607
Ժամանակաշրջանի ընթացքում տրված վարկեր	-	34,985	-	29,343
Տարվա ընթացքում վարկերի մարումներ	-	(20,220)	-	(31,022)
Վարկերի մնացորդը ժամանակաշրջանի դրությամբ (համախառն)	-	62,693	-	47,928
Հանած վարկերի արժեզրկման պահուստը	-	(2,855)	-	(960)
Վարկերի մնացորդը ժամանակաշրջանի դրությամբ	-	59,838	-	46,968
Վարկերից տոկոսային եկամուտ	-	4,765	-	234
<b>Պարտավորություններ ֆինանսական հաստատությունների մասնակիցների նկատմամբ ժամանակահատվածի սկզբում</b>	-	-	-	-
Ավելացում	-	-	-	-
Նվազում	-	-	-	-
Առ 30 սեպտեմբերի 2013թ.	-	-	-	-
Ստացված երաշխիքներ և լիազորագրեր	-	-	-	-
<b>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության տարրեր</b>	-	-	-	-



Փոխառությունների գծով  
տոկոսային ծախսեր

Ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումները ներկայացված են ստորև

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	93,128	117,829
Սոցիալական ապահովագրության ծախսեր	0	6,645
Փոխհատուցումներ խորհրդի անդամներին	1,540	4,476
<b>Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումներ</b>	<b>94,668</b>	<b>128,950</b>

Ղեկավար անձնակազմին տրված վարկերը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել են 41,007 հազար 33 դրամ, 12.49 տոկոս միջին տոկոսադրույքով:

## 25. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Իրական արժեքով չհաշվառվող ֆինանսական գործիքներ

Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ իրական արժեքով չհաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները էականորեն չեն տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքներից:

Պարտավորություններ և պահանջներ այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին, ինչը պայմանավորված է այդ ֆինանսական գործիքների հարաբերականորեն կարճ մարման ժամկետներով: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը գնահատվել է համապատասխան շուկայական տարեվերջյան դրույքներով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքով:

### *Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին*

Ֆիքսված տոկոսադրույքներով գործիքների իրական արժեքի գնահատումը հիմնված է նմանատիպ վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող նոր գործիքների ընթացիկ տոկոսադրույքով դիսկոնտավորված ակնկալվող ապագա դրամական հոսքերի իրական արժեքի վրա:

### *Փոխառություններ*

Գործող շուկայում չզննանշված, ֆիքսված տոկոսադրույքներ ունեցող և զրո տոկոսադրույքով փոխառությունների իրական արժեքը որոշվում է նմանատիպ մարման ժամկետ ունեցող նոր



պարտքերի տոկոսադրույքով դիսկոնտավորված դրամական հոսքերի հիման վրա: Կազմակերպության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում իրական արժեքով չներկայացված փոխառությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքից:

## 26. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը ըստ նրանց սպասվող մարման ժամկետների:

	Ըստ պահանջի և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	Մինչև 12 ամիս հանրագումար	հազ. դրամ		
					1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
<b>Ակտիվներ</b>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	236,540	-	-	236,540	-	-	236,540
Ավանդներ բանկերում	316,623	122,493	-	439,116	-	-	439,116
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներից		150,760	514,997	665,757	2,830,314	1,010,252	4,506,323
Պահանջներ ՀՀ կառավարության նկատմամբ	949		28,341	29,290			29,290
Այլ պահանջներ	10,921			10,921		-	10,921
	<b>565,033</b>	<b>273,253</b>	<b>543,338</b>	<b>1,381,624</b>	<b>2,830,314</b>	<b>1,010,252</b>	<b>5,222,190</b>
<b>Պարտավորություններ</b>							
Պարտավորություններ մասնակիցների նկատմամբ			13,863	13,863			13,863
Պարտավորություններ ռեզիդենտ իրավաբանական անձանց և հիմնարկների նկատմամբ	1,961		5,250	7,211			7,211
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	9,801		86,970	96,771	2,276,412	1,898,464	4,271,647
Այլ պարտավորություններ	10,952			10,952		45,206	56,158
	<b>22,714</b>	<b>0</b>	<b>106,083</b>	<b>128,797</b>	<b>2,276,412</b>	<b>1,943,670</b>	<b>4,348,879</b>
<b>Ջուտ դիրք</b>	<b>542,319</b>	<b>273,253</b>	<b>437,255</b>	<b>1,252,827</b>	<b>553,902</b>	<b>-933,418</b>	<b>873,311</b>
<b>Կուտակային ճեղքվածք</b>	<b>542,319</b>	<b>815,572</b>	<b>1,252,827</b>		<b>1,806,729</b>	<b>873,311</b>	

## 27. Ռիսկի կառավարում



Կազմակերպության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանությունը, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկը հանդիսանում է ֆինանսական գործունեության անբաժանելի մասը, և գործառնական ռիսկերը գործունեության ծավալման անխուսափելի հետևանքն են: Այդ պատճառով Կազմակերպության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Կազմակերպության վիճակի վրա դրանց անցանկալի ազդեցությունները:

Կազմակերպության ռիսկի կառավարման քաղաքականությունը նպատակ ունի ախտորոշելու և վերլուծելու ռիսկերը, սահմանելու ռիսկի համապատասխան սահմանաչափերը և վերահսկումները, և վերահսկելու ռիսկերը և համապատասխանությունը սահմանաչափերին՝ օգտագործելով արժանահավատ և ժամանակակից տեղեկատվական համակարգերը:

Ռիսկի կառավարումը իրականացնում է Կազմակերպության ղեկավար անձնակազմը՝ առաջնորդվելով Խորհրդի կողմից հաստատված քաղաքականությամբ: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և հեջավորում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Կազմակերպության գործառնական միավորների հետ: Խորհուրդը տրամադրում է ուղեցույցներ ինչպես ընդհանուր վերցրած ռիսկերի կառավարման համար, այնպես էլ առանձնահատուկ բնագավառների համար, ինչպես օրինակ փոխարժեքային ռիսկը, տոկոսադրույքի ռիսկը, ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառումը: Բացի այդ, ներքին աուդիտը պատասխանատու է ռիսկի կառավարման և վերահսկողության միջավայրի անկախ վերահսկողության համար: Ռիսկի կարևորագույն տեսակներն են վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկերը: Շուկայական ռիսկը ներառում է փոխարժեքի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը:

**Վարկային ռիսկ**

Կազմակերպությունը ենթարկվում է վարկային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ռիսկ, որ պայմանագրի մյուս կողմը, չիրականացնելով իր պարտավորությունը, Կազմակերպությանը կպատճառի ֆինանսական վնաս: Վարկային ռիսկը Կազմակերպության գործունեության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով Ղեկավար անձնակազմը ավելի մեծ ուշադրությամբ է վերահսկում այն: Վարկային ռիսկը հիմնականում կապված է վարկային գործունեության հետ, որը բերում է վարկերի և փոխատվությունների տրամադրման, և ներդրումային գործունեության, որը հանգեցնում է պարտքային և այլ արժեթղթերի ավելացմանը Կազմակերպության ակտիվների պորտֆելում: Վարկային ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են, օրինակ, վարկային պարտավորությունները:

**Վարկային ռիսկի առավելագույն չափն առանց գրավի կամ այլ վարկային ապահովման**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի վատագույն տարբերակը առ 31 դեկտեմբերի 2012թ. և 30 սեպտեմբերի 2013թ., առանց հաշվի առնելու ցանկացած գրավ կամ այլ վարկային ապահովումներ: Հաշվեկշռային ակտիվների առումով, վարկային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային զուտ արժեքների վրա:

	<u>հազ. դրամ</u>	
<b>Ծանոթագր.</b>	<b>Համախառն առավելագույն ռիսկի չափը առ 30 սեպտեմբեր 2013</b>	<b>Համախառն առավելագույն ռիսկի չափը առ 31 դեկտեմբեր 2012</b>





Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	236,540	164,521
Ավանդների բանկերում	14	439,116	589,116
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներից	15	4,337,923	3,676,611
Լիզինգ	16	168,400	167,882
<b>Ընդամենը վարկային ռիսկ</b>		<b>5,181,979</b>	<b>4,598,130</b>

### Վարկային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

#### Աշխարհագրական սեգմենտներ

Կազմակերպության բոլոր ակտիվները գտնվում են ՀՀ-ում:

#### Արդյունաբերական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Կազմակերպության վարկային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով առ սեպտեմբերի 30-ը 2013թ.՝ դասակարգված ըստ պայմանագրային կողմի արդյունաբերության ճյուղի:

հազ. դրամ

	Ֆին. հաստատություններ	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Առևտուր	Հիփոթեքային վարկեր	Սպառողական սեգմենտ	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	236,540	-	-	-	-	-	-	236,540
Ավանդների բանկերում	439,116	-	-	-	-	-	-	439,116
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներից	-	323,083	3,491,350	459,190	-	37,153	27,147	4,337,923
Լիզինգ	-	6,338	162,062	-	-	-	-	168,400
<b>Առ 30 սեպտեմբեր 2013</b>	<b>675,656</b>	<b>329,421</b>	<b>3,653,412</b>	<b>459,190</b>	<b>-</b>	<b>37,153</b>	<b>27,147</b>	<b>5,181,979</b>
<b>Առ 31 դեկտեմբեր 2012</b>	<b>756,229</b>	<b>238,177</b>	<b>3,205,924</b>	<b>363,111</b>	<b>-</b>	<b>17,116</b>	<b>17,573</b>	<b>4,598,130</b>



## Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Կազմակերպությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված վարկային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև արդյունաբերական և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Վարկային ռիսկի մակարդակը վերահսկելու նպատակով Կազմակերպությունը սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են տարեկան, իսկ անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախակի վերանայման:

Վարկային ռիսկի չափը կառավարվում է նաև փոխառուների և հնարավոր փոխառուների՝ մայր գումարի և տոկոսավճարների վճարման հնարավորության վերլուծության և, անհրաժեշտության դեպքում, սահմանաչափերի փոփոխության միջոցով:

Ստորև ներկայացված են այլ առանձնահատուկ վերահսկողության և զսպման միջոցներ:

### Գրավ

Կազմակերպությունը կիրառում է մի շարք կանոններ և միջոցներ՝ վարկային ռիսկը մեղմելու նպատակով: Դրանցից ամենատարածվածը տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելն է, որը համընդհանուր գործելակերպ է: Կազմակերպությունը սահմանում է ուղեցույցներ՝ գրավի որոշակի տեսակների ընդունելի լինելու և վարկային ռիսկի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների դիմաց հիմնական գրավների տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրով գրավադրված անշարժ գույք
- Կազմակերպության գործառնական ակտիվները՝ շենքերը, փոխադրամիջոցները, պաշարները և դեբիտորական պարտքերը

Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ գրավի տեսակների

	30.09.2013	<u>հազ. դրամ</u> 31.12.2012
Անշարժ գույք	182,916	226,937
Խառը	2,830,390	2,262,651
Երաշխավորություն	1,373,966	1,192,880
*Առանց գրավ և երաշխավորություն	27,936	12,661
Հաշվեգրված տոկոսներ	42,162	18,619
Հանած վարկի արժեզրկման պահուստը	(119,447)	(37,137)
<b>Ընդամենը վարկեր և փոխատվություններ հաճախորդներին (համախառն)</b>	<b>4,337,923</b>	<b>3,676,611</b>

\*Աշխատակիցներին տրամադրված վարկեր աշխատավարձի եռապատիկի չափով

### Արժեզրկման և պահուստավորման քաղաքականություն

Վարկի արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսագումարների 90 օրից ավել ուշացումները կամ վարկառուների՝ դրամական միջոցների



հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները կամ պայմանագրի սկզբնական պայմանների խախտումը: Կազմակերպությունը վերագրում է արժեզրկման գնահատումները անհատական կամ խմբային գնահատման ենթակա պահուստների:

*Արժեզրկման անհատական գնահատում*

Կազմակերպությունը յուրաքանչյուր անհատապես էական վարկի կամ փոխատվության գծով պահուստի չափը որոշում է անհատական հիմունքով: Պահուստի գումարի որոշման ժամանակ հաշվի առնվող գործոններից են վարկառուի բիզնես ծրագրի վստահելիությունը, նրա՝ ֆինանսական դժվարությունների հաղթահարման կարողությունը, ծրագրված հասույթները և ակնկալվող շահաբաժինները անվճարունակության դեպքում, այլ ֆինանսական օգնության հնարավորությունը, գրավի իրացվելի արժեքը և սպասվող դրամական հոսքերի ժամկետները: Արժեզրկման կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, եթե չնախատեսված հանգամանքները ավելի մեծ ուշադրություն չեն պահանջում:

*Արժեզրկման խմբային գնահատում*

Արժեզրկման խմբային գնահատումն իրականացվում է անհատապես ոչ էական վարկերի և փոխատվությունների և անհատապես էական վարկերի և փոխատվությունների նկատմամբ, որոնց համար դեռևս առկա չեն անհատական արժեզրկման ակնհայտ հատկանիշները: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, և յուրաքանչյուր պորտֆելը վերանայվում անհատապես:

Խմբային գնահատման ժամանակ հաշվի է առնվում պորտֆելում հավանականորեն առկա արժեզրկումը, նույնիսկ եթե անհատական գնահատումը չի տալիս արժեզրկման մասին օբյեկտիվ վկայություն:

Արժեզրկման վնասները գնահատվում են՝ հաշվի առնելով հետևյալ տեղեկատվությունը՝ պորտֆելի վնասների պատմությունը, ընթացիկ տնտեսական պայմանները, վնասի առաջացման և անհատապես հաշվարկված պահուստի անհրաժեշտության բացահայտման միջև ընկած ժամանակը, ինչպես նաև արժեզրկման դեպքում սպասվելիք վճարումները:

*Չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկեր և փոխատվություններ*

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է չարժեզրկված և ոչ ժամկետանց վարկերի և փոխատվությունների վարկային որակը ըստ ակտիվների դասակարգման՝ հիմնվելով հակառակ կողմի չվճարման պատմական տոկոսադրույքների վրա:

	30.09.2013	հազ. դրամ 31.12.2012
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին		
Մասնավոր ձեռնարկություններ	2%	2%
Ֆիզիկական անձինք	2%	2%
Անհատ ձեռնարկատերեր	2%	2%

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ  
1-28 ծանոթագրությունները կազմում են 2013 թ. 3-րդ եռամսյակ  
ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:



**Ժամկետանց և արժեզրկված վարկեր**

2013թ սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության ժամկետանց կամ արժեզրկված վարկերը, ունեն հետևյալ տեսքը:

		30.09.2013	31.12.2012
Ժամկետանց վարկեր		97,440	59,042
	<i>Պահուստ</i>	(23,137)	(16,901)
Այլ արժեզրկված վարկեր		53,005	15,127
	<i>Պահուստ</i>	(10,293)	(2,839)
<b>Ընդամենը ժամկետանց և արժեզրկված վարկեր</b>		<b>150,445</b>	<b>74,169</b>
	<i>Ընդամենը պահուստ</i>	(33,431)	(19,740)
<b>Զուտ ժամկետանց և արժեզրկված վարկեր</b>		<b>117,014</b>	<b>54,429</b>

2013թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպության դուրս գրված վարկերը, ունեն հետևյալ տեսքը:

		30.09.2013	31.12.2012
Դուրս գրված վարկեր		49,054	27,733
	<i>Ծախս</i>	(49,054)	(27,733)
<b>Ընդամենը դուրս գրված վարկեր</b>		<b>49,054</b>	<b>27,733</b>

**Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայում առկա փոփոխությունների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքի և փոխարժեքի տատանումները: Կազմակերպությունը չի տեղաբաշխել և չի ստացել տատանվող տոկոսադրույքով վարկեր: Բացի փոխարժեքային ռիսկի կենտրոնացումներից, Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի այլ կենտրոնացումներ:

**Փոխարժեքային ռիսկ**

Փոխարժեքային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կփոփոխվի արտարժույթի փոխարժեքի տատանումների հետևանքով: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Կազմակերպության փոխարժեքային ռիսկի վերլուծությունը ներկայացված է ստորև:

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	հազ. դրամ Ընդամենը
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	205,718	30,822	236,540
Վարկեր և փոխատվություններ	3,707,142	630,781	4,337,923

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈւՎԿ ԱԿ  
1-28 ծանոթագրությունները կազմում են 2013 թ. 3-րդ եռամսյակ ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:



հաճախորդներին

Լիզինգ	168,400	0	168,400
Կանխավճարներ մատակարարներին	10,991		10,991
Ավանդներ բանկերում	-	439,116	439,116
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>4,092,251</b>	<b>1,100,719</b>	<b>5,192,970</b>

**Պարտավորություններ**

Պարտավորություններ այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	-	-	-
Փոխառություններ	3,834,145	408,494	4,242,639
Կրեդիտորական պարտքեր	7,211		7,211
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>3,841,356</b>	<b>408,494</b>	<b>4,249,850</b>
<b>Զուտ դիրքը առ 30 սեպտեմբեր 2013</b>	<b>250,895</b>	<b>692,225</b>	<b>943,120</b>

Ազատ փոխարկելի արժույթները հիմնականում ներառում են Եվրոն ու ԱՄՆ դոլարը:

**Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Կազմակերպությունը չի կարողանա մարել իր վճարման պարտավորությունները սթրեսային և նորմալ իրավիճակներում: Այս ռիսկի սահմանափակման համար Դեկավարությունը ներգրավել է լրացուցիչ դրամական միջոցներ, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Կազմակերպության իրացվելիության վերահսկողությունը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ինչպես նաև ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել իրացվելիության հաշվեկշռային գործակիցները: Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ըստ մարման ժամկետների՝ 2013թ. 30 սեպտեմբերի դրությամբ, հիմնվելով չդիսկոնտավորված վճարումների պայմանագրային պարտավորությունների վրա: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ դրանք կպահանջվեն անմիջապես:

**հազ. դրամ**  
30.09.2013



	Ցպահանջ, մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	-
Պարտավորություններ այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	-	-	-	-	-	-
Փոխառություններ	67,763	-	-	3,001,462	1,173,414	4,242,639
<b>Ընդամենը չդիսկոնտավորված ֆինանսական պարտավորություններ</b>	<b>67,763</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>3,001,462</b>	<b>1,173,414</b>	<b>4,242,639</b>
						31.12.2012
	Ցպահանջ, մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-	-
Պարտավորություններ այլ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	-	-	-	-	-	-
Փոխառություններ	116,843	-	-	427,217	3,183,501	3,727,561
<b>Ընդամենը չդիսկոնտավորված ֆինանսական պարտավորություններ</b>	<b>116,843</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>427,217</b>	<b>3,183,501</b>	<b>3,727,561</b>

## 28. Կապիտալի համարժեքություն

Կազմակերպության կապիտալի կառավարման առաջնային նպատակն այն է, որ Կազմակերպությունը համատասխանի հաստատված արտաքին պահանջերին: Կազմակերպությունը շահագրգռված է պահպանելու բարձր վարկային վարկանիշ և կապիտալի առողջ նորմատիվներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և սեփական կապիտալը հետևողականորեն աճեցնելու գործում:

Կազմակերպությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը՝ կատարելով ճշգրտումներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների և ռիսկի բնույթի փոփոխության հետևանքով:



Անցյալ տարվա համեմատ փոփոխություններ չեն եղել Կազմակերպության նպատակներում, քաղաքականությունում և գործողություններում:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկի կշիռների ստորակարգության՝ դասակարգվելով համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի բնույթի և զնահատման:

ՀՀ Կենտրոնական բանկը սահմանել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափը՝ 150,000 հազար ՀՀ դրամ: Կազմակերպությունը պահպանել է կապիտալին ներակայացվող բոլոր պահանջները: